

ԿՈՎԿԱՍԻ ՊԱՏՄԱ-ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԱՏՂԱՍ

Այս նարցիս էր նվիրված ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի բյուրոյի ներթափանցիկ նիստը, որը տեղի ունեցավ ընթացիկ տարվա սեպտեմբերի 24-ին: Հարցի բննարկմանը հրավիրված էր ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի շախմատային խումբի ղեկավար Կազմող հեղինակային խումբը: Նիստին մասնակցում էին նաև ՍՍՀՄ ԳԱ ազգագրության ինստիտուտի գերեկտորի տեղակալ, պրոֆ. Մ. Ի. Բրուկեր և նույն ինստիտուտի Կովկասի ժողովուրդների ազգագրության ջրամիջավորի, պրոֆ. Վ. Կ. Գարզանովը:

Ինչպես Արևմտյան Եվրոպայում, այնպես էլ Ռուսաստանում՝ պատմա-ազգագրական ատլասի ստեղծման ուղղությամբ որոշ փորձեր են կատարվել գեոևս ներկա զարի սկզբներից: 1963 թ. միջազգային ազգագրական «Demos» հանդեսի (ԳԳՀ) խմբագրական կոլեգիայի՝ Մոսկվայում կայացած միջազգային խորհրդակցությունն ընդունեց հատուկ հանձնարարական, ըստ որի անհրաժեշտ և նպատակահարմար համարվեց Եվրոպայի սոցիալիստական երկրների և հարևան մի շարք այլ պետությունների գիտնականների շանքերով ստեղծել Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի պատմա-ազգագրական համահավաք ատլաս: Ատլասը պետք է ընդգրկի ՍՍՀՄ-ի Եվրոպական մասը (այդ թվում նաև Հյուսիսային Կովկասն ու Անդրկովկասը), Հնաստանը, Չեխոսլովակիան, Հունդարիան, Ռումինիան, Բուլղարիան, Հարավարևելյան, Ալբանիան, Հունաստանը, Ավստրիան, ԳԳՀ-ն, ԳՖՀ-ն և Ֆինլանդիան (ենթադրվում է՝ նաև Շվեյցարիան): ՍՍՀՄ ԳԱ նախադասության որոշմամբ նրատարակվել կամ առաջիկայում պետք է հրատարակվեն ՍՍՀՄ պատմա-ազգագրական մարզերի տեղական (ոնդիոնալ) ատլասներ՝ հետևյալ բաժանումներով՝ Ռուսական (հրատ. 1967), Սիրիերի (հրատ. 1961), ՍՍՀՄ հարավ-արևմտյան մասի (Ուկրաինա-Բելոռուսիա-Մոլդովիա), Մերձբալթիկայի, Միջին Ասիայի (Ղազախստանի հետ) և Կովկասի:

Կովկասի և հատկապես Հայկական ՍՍՀ պատմա-ազգագրական ատլասների կազմման ընթացքի և առաջիկայում կատարվելիք աշխատանքների մասին զեկուցեցին ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի վարիչ, պատմական գիտու-

թյունների թեկնածու Գ. Ս. Վարդումյանը, և ՍՍՀՄ պատմա-ազգագրական ատլասը կազմող հանձնաժողովի նախագահ, պրոֆ. Մ. Ի. Բրուկեր Գ. Ս. Վարդումյանը նշեց, որ մի շարք երկրներում պատմա-ազգագրական տարբեր բնույթի ատլասներ ստեղծելու բազմամյա փորձը սովորական և արտասահմանյան առաջադեմ ազգագրագետներին բերել է այն համոզման, որ սովյալ երկրամասը կամ էթնիկական խումբը բնորոշող ճատկանշական թեմաներն են. 1) Տեանսուրյունն ու զրադունեմները (երկրագործական մշակույթ, անասնապահական մշակույթ, որսորդություն, ճավաբշություն, արհեստներ և տնայնագործություն, նարակից զրադունեներ): 2) Նյուրական մշակույթի ձևերը (բնակավայր, բնակարան ու տնտեսական կառույցներ, տնային կահավարստի, տարազ, ուտեստ և ըմպելիք, փոխադրամիջոցներ): 3) Հոգեթ մշակույթը (ընտանիք, ընտանեկան և նարսանեկան ծեսեր ու սովորություններ, ժողովրդական տոներ, սովորական իրավունք, ժողովրդական գիտելիքներ՝ բժշկություն, արվեստ, բանահյուսություն, զրականություն, կրածություն, պարեր, պաշտամունք և ճավատայիններ): Ինչպես նաև համառ աշխատանք պահանջող ներթափանցիկ պատմա-ազգագրական համահավաք ատլասի կազմման համար որպես առաջիկայում կատարվելիք խնդիր է համարվել տնտեսության (երկրագործություն և անասնապահություն), բնակավայր-բնակարանի և տարազի ատլասների ստեղծումը:

Մ. Ի. Բրուկեր ընդգծեց, որ Հայկական ՍՍՀ ազգագրական ատլասի կազմումը կնպաստի հետազոտում նաև Հայկական լեռնաշխարհի պատմա-ազգագրական ընդարձակ ատլասի ստեղծմանը, երկրամաս, որը հանդիսանում է Աուրազիոն և Փոքր Ասիայի վաղ շրջանի բազմաբնույթի նյութական և ռոգեթ զարգացած մշակույթի բնորոշանքներից մեկը: Պատմական Հայաստանի ազգագրական սպաղա ատլասը գուրս զալով իր տեղական, գուտ-ազգային նշանակություն ունեցող շրջանակներից, կուսուրաներ նաև ընդհանուր կովկասյան հետաքրքրություններ կայացնող նյութական և ռոգեթ մշակույթի ծագումնաբանական ու փոխադրեցությունների շատ կենտոտ խնդիրները: Ուստի անհրաժեշտ է, որ ինչպես ՀՍՍՀ, այնպես էլ Հայկական լեռնաշխարհի պատմա-ազգագրական սպաղա ատլասի

ստե՛ծումը համարվի ՀՍՍՀ ԳՊ նախագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի հիմնական պրոֆեսոր և աշխատչես զանգի 2111 ԳՊ նախագիտության, հասարակական գիտությունների բաժանմունքի բյուրոյի և նախագիտության ու ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի ազգագրության կենտրոնում, մասնակցա արտասահմանյան երկրներում, այնպես էլ ՄԱՄ-ում պատմա-ազգագրական ատյանների կազմման նպատակով ստեղծվել են գիտական և գիտա տեխնիկական որակյալ կազմեր ընդգրկու հատուկ ինստիտուտներ կամ հանձնաժողովներ, որոնք տարիներ շարունակ զբաղվում են այդ հարցերով: Հայաստանում նորերս (1969 ից) սկսված այս զործր պահանջում է ուժերի մեծ յարում և նյութական միջոցներ:

Անդրազատնայով այդ ուղղությամբ Հայաստանում տարվող աշխատանքներին (որոնք նախատեսված պլանով սկսվել են 1969 թ. և պետք է ավարտվի 1973 թ.), ղեկուցողները նշեցին, որ եթե նախագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի բոլոր գիտաշխատողները (ընդամենը 11 անդի) մասնակցավորապես նետածղեն իրենց պլանային թվանների (որը մասամբ արված է) ու լծվեն ատյանի այդ երեք բաժինների կազմմանը՝ դարձյալ Գիտական անհար է զբանք նախատեսված մասնակցին ավարտել: Անհրաժեշտ է անհույս ազգագրության բաժինը համարել ինչպես գիտական, այնպես էլ գիտա-տեխնիկական (նարարարպետ, բարտեղագիր, բարտագրոս և այլ) համապատասխան կազմերով ու տրամադրել լրացուցիչ ֆինանսական միջոցներ, այդ հայրենակներ ու շնորհակալ աշխատանքում ներգրավելով նաև ՀՍՍՀ ԳՊ նարակից ինստիտուտների գիտաշխատողներին, ինչպես նաև Հայաստանի պատմության պետական թանկարանի, Մատենադարանի, ՀՍՍՀ պետական արխիվի գիտաշխատողներին, Արևանի պետական համալսարանի և մանկավարժական ինստիտուտի հումանիտար ֆակուլտետների ուսանողներին ու գյուղական ինստիտուտների ուսուցիչներին:

Բննարկվող հարցի վերաբերյալ ելույթներով հանդես եկան պրոֆ. Վ. Կ. Կարգանովը, ակադեմիկոսներ Ս. Տ. Արեմյանը, Ա. Ս. Ղարիբյանը, ՀՍՍՀ ԳՊ թղթակից-անդամներ՝ Բ. Ն. Ասարևյանը, Գ. Բ. Ջալալյանը, հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի գիտաշխատողներ՝ պատմ. գիտ. դոկտոր է. Մ. Կարապետյանը, պատմ. գիտ. թեկնածու Յու. Ի. Մկրտումյանը և Հայաստանի պատմության պետական թանկարանի ազգագրության բաժնի վարիչ, պատմ. գիտ. թեկնածու Վ. Ա. Արար համյանը:

Ակադեմիկոս Ս. Տ. Արեմյանը նշելու էր՝ կատի. այդ թվում նաև ՀՍՍՀ ազգագրական ինստիտուտի կարևորագույն նշանակությունը, ընդգծեց նաև հարկազան լեռնաշխարհի պատմա-ազգագրական ատյանի ստեղծման անհրաժեշտությունը: Եւրո էլույթ անցողներն էլ մեծ նշանակություն տվեցին ազգագրական նյութեր մատակարարող գյուղական թղթակիցների լայն ցանց ստեղծելուն: Պրոֆ. Գ. Բ. Ջալալյանը նշեց, որ բոլոր զեղքերում պատմա-ազգագրական ատյանի կազմման հիմնական աշխատանքները պետք է կատարի նախագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժինը՝ ստեղծելով տեղական թղթակիցների լայն ու մշտական ցանց: Ինչպես ունենալով այն հանդամները, որ բացի նշված երեք բնագավառներից (տնտեսություն, բնակավայր-բնակարան, տարագ), սպազայում պետք է կազմվեն հայ ժողովրդի նյութական ու շոգևոր մշակույթի նախ մյուս բնագավառների պատմա-ազգագրական ատյաններ, Յու. Ի. Մկրտումյանն առաջարկեց հարց հարուցել ՀՍՍՀ ԳՊ նախագիտության առջև՝ հայ ազգագրության զծով տարեկան զոնն երկու ասպիրանտական տեղ հետևանքներ, որտեղ կրնգրկվեն նրանի պետական համալսարանի պատմության, աշխարհագրության և այլ ֆակուլտետների լավագույն շրջանավարտները:

Բննարկման արդյունքներն ամփոփեց ՀՍՍՀ ԳՊ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-բարտուղար Մ. Պ. Աղայանը: Ակադեմիկոս Մ. Պ. Աղայանն առաջարկեց ՀՍՍՀ ԳՊ նախագիտությանը կից ստեղծել հատուկ պրոբլեմային հանձնաժողով, այնտեղ ընդգրկելով համապատասխան մասնագետներին: Նիստի վերջում բյուրոն ընդունեց համապատասխան որոշում, որի համաձայն Հայկական ՍՍՀ և Հայկական լեռնաշխարհի պատմա-ազգագրական ատյանների ստեղծումը համարվեց բաժանմունքի կարևորագույն պրոբլեմներից մեկը, ընդ որում, նպատակահարմար գտնվեց առաջին հերթին կազմել ՀՍՍՀ պատմա-ազգագրական ատյան: Այս նպատակով որոշվեց ՀՍՍՀ ԳՊ նախագիտությանը, ինչպես նաև հնագիտության և ազգագրության ինստիտուտին կից ստեղծել պրոբլեմային հանձնաժողովներ: Խրախուսելի համարվեց ատյանի նյութերի հրատարակումն առանձին պրակներով: Բյուրոն անհրաժեշտ գտավ հարց հարուցել ստեղծելու Ազգագրական ընկերությունը: Նշված հարցերը նախապատրաստելու և ՀՍՍՀ ԳՊ նախագիտության բննարկմանը ներկայացնելու համար ստեղծվեց հատուկ հանձնաժողով:

Լ. Ն. ՊԵՏՐՈՍՅԱՆ